

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության արտաբյուջետային ֆոնդ վճարման ենթակա վճարների չափերը սահմանելու մասին» N 1408-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) 2.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| « NN ը/կ | Վճարի տեսակը | Վճարի չափը |
|-------------|---|---|
| 2.1. | տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի տրամադրում | 60.000 դրամ 100.000 դրամ 150.000 դրամ 250.000 դրամ 400.000 դրամ 500.000 դրամ 600.000 դրամ 1.000.000 դրամ 1.500.000 դրամ 2.000.000 դրամ 3.000.000 դրամ 5.000.000 դրամ 8.000.000 դրամ |

2) 3-րդ կետը «տրամադրում» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն հավելվածի 3.1-ին կետով նախատեսված դեպքերի» բառերով.

3) հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին կետով.

| « NN ը/կ | Վճարի տեսակը | Վճարի չափը |
|-------------|--|------------|
| 3.1. | «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միությանը և դրան անդամակցող ապահովագրական ընկերություններին ճանապարհատրանսպորտային պատահարի ելակետային տվյալների վերաբերյալ օրենքով չարգելված տեղեկատվության տրամադրում | 4.000 դրամ |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: